ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ

✓ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը.

✓ Մարդու իրավունքների պաշպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, իր լիազորություններն իրականացնում է Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության և անկախ փորձագետների միջոցով.

✓ Այդ աշխատանքներին ներգրավված են իրավաբաններ, հոգեբան, սոցիոլոգ և բժիշկներ, այդ թվում՝ հոգեբույժ:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԵԼ ՄԵՆՔ

Իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր ազատությունից զրկման վայրեր՝ վատ

✓ վերաբերմունքը կանխարգելելու նպատակով, և պարտավոր չենք հաստատությանը նախապես տեղեկացնել այցերի ժամանակի կամ նպատակի մասին.

✓ Անարգել տեսակցել ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց և նրանց հետ ունենալ առանձնազրույցներ.

✓ Ոչ ոք իրավասու չէ գաղտնալսել կամ միջամտել այդ առանձնազրույցներին.

✓ Անհրաժեշտության դեպքում ներգրավել թարգմանիչ, օգտագործել տեխնիկական միջոցներ.

✓ Իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնել առաջարկություններ՝ վատ վերաբերմունքը կանխարգելելու, ինչպես նաև ազատությունից զրկման ցանկացած վայրում գտնվող անձանց պահման պայմանները բարելավելու նպատակով.

✓ Տեղում ծանոթանալ ցանկացած փաստաթղթի և ստանալ այդ փաստաթղթերի պատճենները:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԱՐԳԵԼ ԱՅՑԵԼԵԼ

✓ Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր.

✓ Քրեակատարողական հիմնարկներ.

✓ Հոգեբուժական կազմակերպություններ.

✓ Կայազորային կարգապահական մեկուսարաններ.

✓ Ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցներ.

✓ Ցանկացած այլ վայր, որն անձը չի կարող ինքնակամ լքել առանց համապատասխան որոշման կամ թույլտվության:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

✓ Կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության արդյունքներով նպաստում ենք ազատությունից զրկված անձանց բարձրացրած և մեր արձանագրած խնդիրների լուծմանը.

✓ Անհատական դեպքերի քննարկման արդյունքում կայացնում ենք մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին որոշումներ ու ներկայացնում դրանց լուծմանն ուղղված առաջարկներ.

✓ Եզրակացություններ ենք կազմում մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ.

✓ Դիմումներ և հատուկ կարծիքներ ենք ներկայացնում Սահմանադրական դատարան.

✓ Իրականացնում ենք ազատությունից զրկման վայրերի աշխատակիցների վերապատրաստումներ.

✓ Կատարված ուսումնասիրություններն ու արձանագրված խնդիրները ներկայացնում ենք տարեկան զեկույցում, որն ուղարկվում է Ազգային Ժողով, ինչպես նաև ներկայացնում ենք հանրությանը.

✓ Հրապարակում ենք արտահերթ զեկույցներ կամ հաղորդումներ՝ սահմանելով հետևողական հսկողություն այդ խնդիրների, ինչպես նաև բարձրացված հարցերի վերացման և լուծման նկատմամբ:

ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

✓ Որևէ պետական մարմին, պաշտոնատար կամ ցանկացած այլ անձ իրավունք չունի ազատությունից զրկված անձանց նկատմամբ գործադրել ճնշումներ և սպառնալիքներ մեզ հետ հանդիպելու, զրուցելու, մեզ դիմելու և տեղեկություններ տրամադրելու համար: Դրա համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:

✓ Արգելված է մեզանից բացատրություն վերցնել կամ հարցաքննել, մեզ մոտ առկա փաստաթղթերը ծանոթացման տրամադրել, եթե բացակայում է Պաշտպանի գրավոր համաձայնությունը:

ՊԱՇՏՊԱՆԻՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

✓ Բողոքը Պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով:

✓ Գրավոր կարգով ներկայացվող բողոքները կարող են անձամբ ներկայացվել Պաշտպանի աշխատակազմ, ուղարկվել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացվել առցանց:

✓ Բողոքի համար որևէ հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները, իսկ առկայության դեպքում՝ գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

✓ Բողոքը պետք է ներառի նաև ամիսամսաթիվ և լինի ստորագրված:

✓ Պաշտպանին ուղղված բողոքները ենթակա չեն ստուգման կամ գրաքննության:

✓ Բողոքներն իրավասու մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք. Երևան, Պուշկինի 56ա
+374 10 500529 (քաղաքային)
ombuds@ombuds.am (էլեկտրոնային փոստ)

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Մհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116
Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+374 285 20116

OMBUDS.AM
PASHTPAN.AM

116 ԹԵԺ ԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Նոյեմբեր 2018